## ԲԱՐԵՊԱՇՏԱԿԱՆ ՆՈՒԷՐՆԵՐ

**Շնորհակալութեամբ եւ օրհնութեամբ կ'արձանագրենք 1989 տարւոյ ընթացքին Ս. Յակոբեանց Մայր Տաճարին եւ այլ Սրբավայրերուն եղած հետեւեալ բարեպաշտական նուէրները:**

1) Տիրուհի Մայրապետ Կարապետեանէ՝ Ս. Գերեզմանի համար ասեղնագործ ծածկոց մը եւ դրան ասեղնագործ վարագոյր մը։

2) Երուսաղեմէն՝ Տիկին Նոյեմի Նալպանտեանէ՝ Թոմլէի Ս. Գէորգ Եկեղեցւոյ համար ասեղնագործ սկիհի ծածկոց մը։

3) Նիւ Ճըրզիէն՝ Տիկին Ջապէլ Ասլանեանէ՝ սկիհի ծածկոց մը։

4) Փարիզէն՝ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Երանուհի Մանուկեաններէ՝ Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարի Աւագ Խորանին՝ 80 հատ սպուրմաչեղ մոմ, վեց ձեռաց խաչի քանիչ, ութը սեղանի եւ գրակալի ծածկոց, ինը Մասունքի քանիչ, տասներկու Թանալաւայի անձեռոց, տասնըհինգ թէք ուրար, չորս տարմա ուրար, երեսուն եմիփորոնի մեծ եւ փոքր խաչեր եւ զարդեր, վեց եմիփորոնի կլորաձեւ մեծ զարդեր, մէկ հատ պատարագի շապիկ, տասնըվեց զոյգ հողաթափ, հինգ սարկաւագաց շապիկ, զոյգ մը ճերմակ վզնոց եւ տարմա ուրար, Աւագ Խորանի ձեռագործ գորփուրայ մը, մէկ Աւետարանի մեծ գրակալի ծածկոց, Յայսմաւուրքի գրակալի ծածկոց մը, երկու Աւետարանի փոքր գրակալներու ծածկոց։

5) Երուսաղեմէն՝ Տիկին Մարի Յակոբեանէ՝ Ս. Յակոբայ Աւագ Սեղանին ասեղնագործ ծածկոց մը։

6) Տիրացու Գաբրիէլ Նալպանտեանէ՝ հինգ քիլոկրամ խունկ Ս. Յակոբեանց Մայր Տաճարին։

7) Երուսաղեմաբնակ Տէր եւ Տիկին Կարապետ եւ Սաթենիկ Յակոբեաններէ՝ Ս. Յարութեան Գերեզմանի հրեշտակի քարին "քրօշէ" ծածկոց մը։

8) Երուսաղեմէն՝ Տիկին Մարգրիտ Ալեքսանեանէ, ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնոյն՝ Ալեքսան Ալեքսանեանի, Սրբոց Յակոբեանց Մայր Տաճարին համար զոյգ մը պղինձէ մինեով բուրվառ մը։

9) Իսթանպուլէն՝ Տիկին Ագապի Ալիս Քիւրքճեանէ՝ սկիհի ծածկոց մը եւ Աւետարանի քանիչ մը։

10) Երուսաղեմէն՝ Տէր եւ Տիկին Տիգրան եւ Նոյեմի Նալպանտեաններէ՝ Ս. Գլխադրի համար պղնձեայ երկու աշտանակներ։

ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊՍ. ԳԱԶԱՆՃԵԱՆ
Լուսարարապետ Ս. Աթոռոյ

### ՈՒՐԱՐԱԿԻՐ ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԷՑԵԱՆ

30 Յունիս, Ուրբաթ օր, Ֆրանսական Սէն Ժոզէֆ հիւանդանոցին մէջ իր մահկանացուն կնքեց Ս. Յարութեան Տաճարի մեր Միաբաններէն Յովհաննէս Երէցեանը, սրտի յաջորդական տագնապներու հետեւանքով, դեռ վաթսուն տարիքը չբոլորած։

Ծնած է Եագուպիէ (Սուրիա)՝ 1929ին եւ 1977ին մտած ի շարս Ս. Աթոռոյ Միաբանից։ Աճիւնը թաղուած է ի Ս. Հրեշտակապետս։

Համեստ ու պարտաճանաչ Տիրացուին յուղարկաւորութիւնը կատարուեցաւ 1 Յուլիս, Շաբաթ, նախատօնակէն ետք, Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Գերշ. Լուսարարապետ Ս. Հօր։ — Հանգիստ իր հոգիին։

### ՄԱՅՐԱՊԵՏ ՏԻՐՈՒՀԻ ԿԱՐԱՊԵՏԵԱՆ

23 Դեկտ., Շաբաթ օր, իր յաւիտենական հանգիստը մտաւ Ս. Ռեփսիմէի վերջին Մայրապետը՝ Տիրուհի Կարապետեան, Բեթլէհէմի (Էմմաուս) ծերանոցին մէջ, ուր փոխադրուած էր քանի մը ամիսներ առաջ իր յառաջացեալ տարիքին եւ խախտած առողջութեան համար։

Ծնած է Պոլիս 1910ին եւ 1960ին մտած է ի շարս Մայրապետաց Ս. Աթոռոյ։

Յուղարկաւորութիւնը կատարուեցաւ յաջորդ առաւօտեան ժամը 11ին Ս. Էջմիածին մատրան մէջ, նախագահութեամբ Ս. Հրեշտակապետաց վանուց (որ Մայրապետանոցն է Ս. Աթոռոյս) Տեսուչ Գերշ. Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի։ — Հանգիստ իր բարի հոգիին։

digitised by A.R.A.R.@